

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 2015 թ. ապրիլի 29-ին տեղի ունեցած թիվ 1 նիստի

ք. Երևան

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 31-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

Օրակարգային առաջին և երկրորդ հարցերի ժամանակ նիստը նախագահում էր Խորհրդի՝ տարիքով ավագ անդամը՝ ԶՅ ԳԱԱ Նախագահ Ռ. Մարտիրոսյանը: Օրակարգային երկրորդ հարցի քննարկումից հետո նիստը նախագահում էր Խորհրդի նորընտիր նախագահ, ԶՅ Նախագահ Ս. Սարգսյանը:

Ռ. Մարտիրոսյանը, բացելով Խորհրդի անդրանիկ նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի հաստատում:
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն:
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն:
4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի հաստատում:
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի պաշտոնի համար բաց մրցույթի հայտարարում:
6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հիմնադրում և կանոնադրության հաստատում:
7. Ընթացիկ հարցեր:

Խորհրդի անդամների կողմից օրակարգային այլ հարց չառաջարկվեց, և օրակարգը դրվեց քվեարկության. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի հաստատում: Ռ. Մարտիրոսյանը շեշտեց, որ Հոգաբարձուների խորհուրդն իր գործառնություններով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինն է: Նա նշեց, որ խորհրդի աշխատակարգի նախագիծը տրված է խորհրդի բոլոր անդամներին, և խորհրդի անդամները կարող են հանդես գալ լրամշակումների առաջարկներով: Հարցի առնչությամբ ելույթ ունեցավ Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի վարիչ Գ. Հաջյանը՝ առաջարկելով խմբագրել նախագծի 2.8 կետի 2-րդ ենթակետը՝ վերաշարադրելով «խորհրդի անդամները պարտավոր են... իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով ԵՊՀ շահերից» ձևակերպումը և ավելացնելով ՀՀ շահերից ելնելու առաջնահերթությունը: Ելույթ ունեցավ նաև ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանը՝ խորհրդի անդամների ուշադրությունը հրավիրելով այն փաստի վրա, որ ԵՊՀ առաքելությունը հստակ սահմանված է ԵՊՀ կանոնադրության մեջ, և այնտեղ արդեն առկա են համապատասխան ձևակերպումները, ուստի կետի վերաշարադրումը չի հակասի ԵՊՀ կանոնադրությանը: Ի վերջո, առաջարկվեց նախագծի 2.8 կետի 2-րդ ենթակետը վերաշարադրել հետևյալ կերպ. «խորհրդի անդամները պարտավոր են... իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով ՀՀ և մասնավորապես ԵՊՀ շահերից»:

Այլ առաջարկներ չհնչեցին, և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի նախագիծը համապատասխան լրամշակմամբ դրվեց քվեարկության. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 1-ին ենթակետով՝ հաստատել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգը:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն: Ռ. Մարտիրոսյանը խնդրեց առաջադրել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմնի՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի թեկնածուություններ: Խորհրդի անդամներից ելույթ ունեցավ Իրավագիտության ֆակուլտետի Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ Ա. Վաղարշյանը, ով հիշեցրեց, որ 2006-2015 թթ. «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կառավարման բարձրագույն մարմինը՝ խորհուրդը,

ղեկավարել է ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը: Նա առաջարկեց շարունակել ձևավորված ավանդույթը և խորհրդի նախագահ ընտրել ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանին: Այլ առաջարկներ չեղան, և առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 34-րդ կետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 կետով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրել Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Ազատի Սարգսյանին:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն: խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը շնորհակալություն հայտնեց «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի խորհրդի քարտուղար Դ. Հայրապետյանին կատարած աշխատանքի համար և առաջարկեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ, Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ Մ. Մալխասյանին:

Առաջարկված թեկնածուի վերաբերյալ խորհրդի անդամներից ելույթներ ունեցան Ուսանողական խորհրդի նախագահ Ռ. Զարամյանը, Հայոց պատմության ամբիոնի դոցենտ Ա. Մովսիսյանը, Անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեսյանը և ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար Ա. Սիմոնյանը (վերջինս՝ խորհրդատվական ձայնի իրավունքով): Ելույթ ունեցողներն առանձնակի շեշտեցին այն փաստը, որ Մ. Մալխասյանը հրատարակել է 5 մեկնագրություն, 30-ից ավելի գիտական հոդված, Հայաստանը և Համալսարանը ներկայացրել է միջազգային գիտաժողովներում, մեծապես ակտիվացրել է ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության աշխատանքները, օժտված է մարդկային բարձր հատկանիշներով: Այլ թեկնածություններ չառաջարկվեցին, և Մ. Մալխասյանի թեկնածությունը դրվեց քվեարկության. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.3 կետով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ, Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ Միքայել Արմենի Մալխասյանին:

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի հաստատում: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը տեղեկացրեց, որ Խորհրդի անդամներին բաժանված է ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի նախագիծը: Հարցի առնչությամբ Խորհրդի անդամներից ելույթ ունեցավ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը, ով առաջարկեց նախագծի հավելվածում տեղ գտած քվեաթերթիկի ձևաթղթից հանել «բոլորին դեմ» տողը: Խորհրդի անդամ, ասպիրանտ Ալ. Սարգսյանն առաջարկեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրության ձևաթղթից և կանոնակարգի մնացյալ հոդվածներից նույնպես հանել «բոլորին դեմ» տողին առնչվող ձևակերպումները:

Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց նշված խմբագրումներով հաստատել ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի նախագիծը. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 2-րդ ենթակետով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4. կետի 2-րդ ենթակետով՝ հաստատել ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգը:

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի պաշտոնի համար բաց մրցույթի հայտարարում: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը նշեց, որ ԵՊՀ կարգավիճակի փոփոխությունից ելնելով՝ անհրաժեշտ է հայտարարել ԵՊՀ ռեկտորի պաշտոնի համար բաց մրցույթ: Հարցի վերաբերյալ Խորհրդի անդամներից ելույթ ունեցավ ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանը: Վերջինիս հավաստմամբ, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի համաձայն, մրցույթի հայտարարման դեպքում ԵՊՀ ռեկտորի ընտրության կազմակերպման համար անհրաժեշտ է 2015 թ. հունիսի 19-ին գումարել Խորհրդի նիստ:

Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն առաջարկեց հայտարարել ԵՊՀ ռեկտորի պաշտոնի համար բաց մրցույթ՝ ընտրության օր նշանակելով 2015 թ. հունիսի 19: Առաջարկը դրվեց քվեարկության. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 2-րդ ենթակետով և ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի 2.1. կետով՝

- 1) ԵՊՀ ռեկտորի պաշտոնի համար հայտարարել բաց մրցույթ:

2) Հոգաբարձուների խորհրդի քարտուղարին հանձնարարել ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցութային անցկացման մասին հայտարարության հրապարակման, թեկնածուների հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

3) ԵՊՀ ռեկտորի ընտրությունն անցկացնել 2015 թ. հունիսի 19-ին:

6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հիմնադրում և կանոնադրության հաստատում: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը տեղեկացրեց, որ Խորհրդի անդամներին բաժանված է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կանոնադրության նախագիծը: Շեշտվեց, որ, համաձայն նախագծի 2-րդ կետի, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության Իջևանի մասնաճյուղի (պետական գրանցման համարը՝ 01Բ.000.135) իրավահաջորդն է (փոխանցման ակտին համապատասխան): Լրամշակումների կամ խմբագրումների առաջարկներ չներկայացվեցին: Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը խորհրդատվական ձայնի իրավունքով կարծիք հայտնելու հնարավորություն տվեց ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ս. Առաքելյանին: Վերջինս որևէ առարկություն կամ փոփոխության առաջարկ չներկայացրեց:

Հարցը դրվեց քվեարկության. կողմ՝ 31, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 8-րդ ենթակետով, 110-րդ ու 111-րդ կետերով և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4. կետի 8-րդ ենթակետով՝ ստեղծել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ և հաստատել նրա կանոնադրությունը:

7. Ընթացիկ հարցեր: Ելույթ ունեցավ Ռ. Մարտիրոսյանը՝ շնորհակալություն հայտնելով ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանին՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները բարձր մակարդակով կազմակերպելու համար: Ռ. Մարտիրոսյանը շեշտեց, որ հրաշալիորեն կազմակերպված ոգեկոչման արարողությունները համազգային միավորման կարևորագույն նշանակությունը ունեցան ողջ հայության համար:

Ի պատասխան՝ Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանն ինքը շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների՝ հավուր պատշաճի կազմակերպման գործում:

Այլ հարցեր չհնչեցին, և Նախագահ Ս. Սարգսյանը նիստը հայտարարեց փակված:

Խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Քարտուղար՝

Մ. Մալխասյան